Փարկինգ Սիթի Սերվիս ՓԲԸ

PARKING CITY SERVICE

Parking City Service CJSC

Հասցե՝ ք.Երևան, Բյուզանդի փ. 1/3, հեռ.՝060-607-607, էլ. Փոստ՝ info@pcs.am

«11» դեկտեմբերի 2025թ.

«ՏՆՄ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ՝ Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
(հասցե՝ .Երևան, Օրբելի 33Ա, բն. 15)

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

### Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրենի ժ/պ՝ Վ. Թադևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՏՆՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ.Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, 23.07.2025թ.-ին կնքել են թիվ «ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-25/12-1» պայմանագիրը հետևյալի մասին:

Պայմանագրի 1.1 կետով՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Համաձայն Պայմանագրի N 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցի՝ ապրանքի մատակարարման ժամկետը սահմանված է ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագրի կնքման օրվանից 90 օրացուցային օրվա ընթացքում: Ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը կնքվել է 19.08.2025թ.-ին, որով մատակարարման վերջնաժամկետը լրացել է 17.11.2025թ.-ին:

Պայմանագրի կատարման ժամկետի ավարտվելու օրվա դրությամբ՝ 17/11/2025թ-ին «ՏՆՄ» ՍՊԸ-ի կողմից մատակարարում չի իրականացվել:

Վերոնշյալ պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում Գնորդն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

**Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ Ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 5 օրից ավելի, Գնորդը համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի՝ 11.12.2025թ. միակողմանի լրիվ լուծում է պայմանագիրը:**

Հայտնում ենք նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ եթե մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և /կամ/ որոկավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացվում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և /կամ/ որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն /Գնորդը/ դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարների Գնորդի «Արդշինբանկ» ՓԲԸ-ում բացված 2470103051800000 հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու դեպքում Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը չի ներկայացվի լիազոր մարմնին:

Տեղեկացնում ենք նաև, որ սահմանված ժամկետում, Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները վճարված չլինելու դեպքում, վերջիններս՝ տուժանքի մասին հանձայնագրերը կից վճարման պահանջագրերի հետ միասին սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները գանձելու նպատակով:

«ՓԱՐԿԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԲԸ–ի տնօրենի ժ/պ Գ. Թադևոսյան